«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի առանձնահատկությունները

Առարկան՝ ՄԱՅՐԵՆԻ

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Թադևոսյան

Ուսումնական հաստատություն՝ Արագածոտնի մարզ,ք.Արտաշատ Ն.Աշտարակեցու անվան հմ1 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն---------- 1
2. Նպատակները ---------- ------- ---------- 2
3. Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի
   առանձնահատկությունները---------- 3-5
4. Ինքնուրույն ընթերցանության խնդիրներն ու սկզբունքները ---------5-13
5. Գործնական համատեքստ ---------- 13-15
6. Ամփոփում---------- 15-16
7. Եզրակացություն/Առաջարկ---------- 16-17
8. Գրականություն,հավելված---------- 17

Կարդալ սովորելը նման է կրակ վառելուն.արտասանված

յուրաքանչյուր վանկ կայծ է:

Վիկտոր Հյուգո

Ներածություն

Կարդալու կարողությունների զարգացման լավագույն միջոց է ինքնուրույն ընթերցանությունը: Լավ կարդալու համար պետք է շատ կարդալ: Արտադասարանական ընթերցանության դերը մեր օրերում արդիական հնչեղություն ունի, քանի որ մատաղ սերունդը համակարգիչը գերադասում է գրքից: Երեխաներին գրքին կապելու աշխատանքը պետք է սկսել հնարավորինս շուտ՝ սկսած գրաճանաչության շրջանից: Որպես միջոց՝ արդյունավետ՝ է արտադասարանային ընթերցանության ճիշտ կազմակերպումը: Ինչպիսի՞ն պետք է լինի այդ աշխատանքը, ի՞նչ զորություն պետք է ունենա երեխաներին գրքին կապելու գործընթացը, որ դիմադրի համակարգչին, բազմաթիվ տեսասարքերին, դրանցով տրվող հսկայածավալ տեղեկատվության դաշտում պահպանի իրենը, անկրկնելին ու անփոխարնելին:Այդ աշխատանքը հարկավոր է այնպես կազմակերպել, որ երեխան հայտնվի գրքերի կախարդական աշխարհում և կապվի գրքին: Կարդացած նյութը պետք է լինի զարմանալի, հրաշալի, հեքիաթային, որպեսզի գիրքը դառնա երեխայի «լավագույն ուղեկիցն ու բարեկամը»:

Մանկավարժական երկարամյա գործունեության բոլոր տարիներին ջանացել եմ դաստիարակել գրին ու գրականությանը նվիրված, ընթերցասեր երեխաներ: Այս առումով կարևոր դերակատարում ունեն հատկապես ընթերցանության դասերը: Աշխատում եմ դրանք կազմակերպել այնպես, որ երեխաները վարժ կարդալ սովորեն, ընթերցանությունը հաճույք պատճառի նրանց, և միաժամանակ փոխանցվի արժեքավոր տեղեկատվություն: Կարդալ և գրել սովորելով՝ երեխաները մուտք են գործում մեծահասակների աշխարհ, ձեռք են բերում գրելու և կարդալու հմտություններ, դառնում ավելի ինքնուրույն և անկախ: Անցնելով դասարանից դասարան՝ փոխվում է երեխաների կարդալու դրդապատճառները:

Մի կողմից այդ դասաժամերի ընթացքում զարգանում են ընթերցողական հետաքրքրությունները,երեխաների աշխարհայացքը,նրանց գեղագիտական ճաշակը,գեղարվեստական պատկերավորման միջոցների ընկալումը,նրանց երևակայությունը և ստեղծագործական միտքը:Մյուս կողմից իրագործվում են ծրագրային,չափորոշչային պահանջները, ձևավորում են ակտիվ ընթերցողին անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

1. Նպատակները

Արտադասարանական ընթերցանությամբ զբաղվելը կարող է էական ազդեցություն ունենալ մարդու մտավոր աճի, ճանաչողական զարգացման և ընդհանուր բարեկեցության վրա: Ահա մի քանի կարևոր կետեր, որոնք պետք է հաշվի առնել:

1.Արտադասարանական ընթերցանության ներառումը առօրյա կյանքում օգնում է երեխաներին զարգացնել կարգապահություն և ժամանակի կառավարման հմտություններ: Սա խրախուսում է անձնական զարգացման և մտավոր գործունեության համար որոշակի ժամանակ հատկացնելու սովորությունը:

2. Նպաստում է վերլուծական և քննադատական մտածողության հմտությունների զարգացմանը: Այն զարգացնում է տեղեկատվությունը կասկածի տակ դնելու, գնահատելու և մեկնաբանելու ունակությունը, ինչը հանգեցնում է բարդ գաղափարների ավելի խորը ընկալման:

3.Ընդլայնված բառապաշար և լեզվական հմտություններ.կանոնավոր ընթերցանությունը կարող է բարելավել բառապաշարը, լեզվի ըմբռնումը և հաղորդակցման հմտությունները: Այն նաև նպաստում է գրելու հմտությունների բարելավմանը և մտքերն ավելի արդյունավետ ձևակերպելու ունակությանը:

4.Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընթերցանությունը կարող է օգնել բարելավել կենտրոնացումը, հիշողության պահպանումը և ընդհանուր ճանաչողական գործառույթը: Այն կարող է նաև նվազեցնել սթրեսի մակարդակը և բարձրացնել հուզական ինտելեկտը:

5.Գրականության մեջ տարբեր կերպարների և իրավիճակների հետ ծանոթանալը կարող է նպաստել կարեկցանքի և հուզական ինտելեկտի զարգացմանը ՝ օգնելով ընթերցողներին հասկանալ տարբեր հեռանկարներ և զարգացնել կարեկցանքի և հասկացողության ավելի մեծ զգացում:

6.Հատկապես գեղարվեստական գրականություն կարդալը կարող է խթանել երևակայությունն ու ստեղծագործականությունը ՝ թույլ տալով երեխաներին ուսումնասիրել նոր գաղափարներ, հասկացություններ և հնարավորություններ իրենց անմիջական միջավայրից դուրս:

7.Արտադասարանական ընթերցանության սովորության մշակումը կարող է սերմանել ուսման սերը, որը գերազանցում է պաշտոնական կրթությունը: Այն նպաստում է ցմահ ուսուցմանը և շարունակական անձնական զարգացմանը:

2.Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի առանձնահատկությունները

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը: Դրա նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը:

Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք լավագույն հատկանիշների դաստիարակում և այլն: Այդ աշխատանքն իրականացվում է հիմնականում երկու ուղղությամբ՝ բուն դասագործընթացում, այսինքն՝ ուսուցմանը զուգընթաց և արտադասարանային ընթերցանության միջոցով :

Արտադասարանային եզրույթն առաջին հերթին նշանակում է ոչ դասարանային, այսինքն՝ տնային ընթերցանություն, ինչպես նաև ընթերցանություն ոչ դասագրքից: Հենց դա է երեխային դեպի գեղարվեստական գրականություն տանող ճանապարհը:

Կրտսեր դպրոցականի համար, որպես ընթերցանության միջոց, գոյություն ունի միայն դասագիրքը: Ինչ խոսք, իր յուրահատուկ ստեղծագործություններով սովորողի համար այն մի ուրույն աշխարհ է: Սակայն գաղտնիք չէ, որ երեխայի համար կարդալը մեծ մասամբ հաճելի զբաղմունք չէ: Այն աշխատատար գործընթաց է: Ընդ որում, անհրաժեշտ է առանձնացնել ընթերցանության երկու տեսակ՝ ընթերցանություն՝ որպես տառերի վերակոդավորում, և ընթերցանություն՝ որպես տեղեկատվության ընկալման հնարավորություն: Այս երկու ուղղություններից անհնար և անիմաստ է մեկի իրականացումն առանց մյուսի: Իսկ դա դեռևս նոր կարդալ սովորող կրտսեր դպրոցականի համար այնքան էլ դյուրընթաց առաջադրանք չէ: Սկզբում նա հիշում է բառերը: Բնագիրը տեսնում ոչ թե տառերի կամ վանկերի, այլ բառերի տեսքով: Ապա աստիճանաբար խորանում է մայրենիի աշխարհում, ինչն էլ նպաստում է անցնել վարժ, սահուն ընթերցանությանը: Եվ բազմաթիվ վարժությունների վրա հիմնված աշխատանքը տալիս է իր պտուղները, երեխան յուրացնում է դասագիրքը և սկսում հասկանալ կարդացածը: Արդեն ժամանակն է անցնել արտադասարանային ընթերցանության: Դրա համար առաջին հերթին հարկավոր է երեխայի հոգում արթնացնել սեր գրքի և ընթերցանության նկատմամբ, որպեսզի գիրք ընթերցելը նրա համար դառնա իսկական հոգեկան պահանջ:

Որքան վաղ է սկսում երեխան կարդալ, այնքան ավելի շուտ է ընթերցանությունը թափանցում նրա հոգևոր աշխարհը և նպաստում ընթերցողական կարողությունների կատարելագործմանը, բառապաշարի հարստացմանը և լեզվական ունակությունների զարգացմանը: Առանց դրանց թերի կմնա անհատի ինքնակրթությունը:

Մայրենիի դասերին գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր ենք արթնացնում մեր ժողովրդի ու հայրենիքի հանդեպ, նրանց հաղորդակից դարձնում հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկությանը և ճկունությանը:

Ահա հենց այդ տեսանկյունից մոտենալով հարցին՝ նկատում ենք, որ միայն մայրենիի դասերի ընթացքում հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Եվ դրա պատճառը միայն ժամանակի սահմանափակությունը չէ: Կարևոր է երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել գրքի ու գեղարվեստական գրականության նկատմամբ՝ սկսած առաջին դասարանից: Ընդ որում դա այնքան էլ հեշտ գործ չէ: Երեխաները չեն կարդում լրացուցիչ գրականություն, սահմանափակվում են միայն ծրագրային նյութերով: Մինչդեռ արտադասարանային ընթերցանությունը մայրենիի ուսուցման կարևորագույն բաղադրիչներից մեկն է և սովորողներին թույլ է տալիս զգալիորեն ընդարձակել ու խորացնել դասերի ընթացքում ձեռք բերած գիտելիքները: Այն աշակերտների մտահորիզոնի ընդլայնման , բառապաշարի հարստացման , գրական ճաշակի ձևավորման կարևորագույն միջոց է:

Արտադասարանային ընթերցանությունը կոչված է բավարարելու տեղեկատվության բազմազան աղբյուրներից օգտվող , շատ բան իմանալ ցանկացող այսօրվա աշակերտի հոգեկան պահանջները: Գիրքը դաստիարակում է դպրոցականի հոգևոր աշխարհը, ձևավորում բարոյական արժեքներ: Հենց դրա միջոցով է իրականանում մի սերնդի հոգևոր արժեքների փոխանցումը հաջորդ սերունդներին:

Ցավոք, մեր աշակերտության մեջ զգալի թիվ են կազմում գեղարվեստական գրականության նկատմամբ ոչ մի հետաքրքրություն չունեցող երեխաները: Դեռևս ոչ վաղ անցյալում գիրք ընթերցելն անհրաժեշտություն էր: Այսօր պատկերը բոլորովին այլ է, սովորողների մեծ մասի ընթերցանության նվազումը պետք է բացատրել նաև տեղեկատվական աղբյուրների առատությամբ:

Յուրաքանչյուր ուսուցչի անհանգստացնում է ճիշտ, գիտակցորեն, սահուն, արտահայտիչ ընթերցողական կարողությունների ձևավորումը, քանի որ ընթերցանությունը մեծ դեր է խաղում աշակերտի անձի զարգացման և կրթության հարցում: Շատ ուսուցիչներ և ծնողներ անհանգստանում են , որ

երեխան չի սիրում կարդալ: Մեր ժամանակներում գիտատեխնիկական առաջընթացը, հեռուստացույցը, համակարգիչը, համացանցը և տարաբնույթ համկարգչային խաղերը ճնշում են երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

Ինչպե՞ս սովորեցնել գիրք կարդալ, որպեսզի երեխան սիրի գիրքը: Բանն այն է , որ մանկական տարիքում կարդացած գիրքը ամբողջ կյանքում հիշվում է և ազդում մարդու մտավոր զարգացման վրա: Այս խնդիրը հատուկ նշանակություն է ստանում տարրական դպրոցում: Դասվարները գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը: Իսկ ավելի դժվար է ձևավորել իսկական ընթերցող: Չէ՞ որ տառերի կապակցմամբ բառ կազմելը և կարդալը դեռևս չի նշանակում դառնալ ընթերցող: Գլխավորը՝ ընթերցանության կազմակերպումն է այնպես, որ այն խթանի անձի զարգացումը: Իսկ զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության:

Տարրական դպրոցում մեծ է ուսուցչի հեղինակությունը աշակերտի մեջ ինքնուրույն ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում: **Սակայն ուսուցիչն ինչպես երեխային օգնում է դառնալ ինքնուրույն ընթերցող, այնպես էլ կարող է կոտրել երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, բավական է պարտադրանքն այդ ուղղությամբ**:

3.Ինքնուրույն ընթերցանության խնդիրներն ու սկզբունքները

Դպրոցում ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունների զարգացումը հնարավոր է արտադասարանական ընթերցանության միջոցով: Դա լայն հնարավորություններ է ընձեռում սովորողի ճանաչողական գործընթացների զարգացման, գրքի նկատմամբ հետաքրքրության դաստիարակության գործում: Տվյալ թեմայի վերաբերյալ մայրենիի դասին հանձնարարված գրականություն ուսումնասիրելով ՝ երեխան ինքնաբերաբար մտնում է ընթերցողական դաշտ և կապվում է գրքին: **Միայն կարդալ սովորեցնելը քիչ է : Ինչպես Ուշինսկին էր ասում, կարդալը դեռ ոչինչ չի նշանակում: Ի՞նչ և ինչպե՞ս կարդալ, սա է հարցի էությունը:**

Եթե նախկինում լրացուցիչ ընթերցանության նյութերը զետեղված էին մայրենիի ընթերցարաններում / դա հեշտացնում է ուսուցչի գործը /, ապա այժմ դասագրքերը չծանրաբեռնելու նպատակով դրանք հանված են: Հետևաբար հրատապ խնդիր էր դարձել ինքնուրույն ընթերցանության նոր ձեռնարկի լուծումը՝ ըստ առանձին դասարանների: Այդ կերպ հնարավոր է ընթերցանության ծրագրային նյութերին համապատասխան լրացուցիչ տեղեկություններ հաղորդել անցնելիք թեմատիկ խմբերի նյութերի վերաբերյալ:

Խնդիրները. Մինչ այժմ «Արտադասարանային ընթերցանություն առարկան» դուրս է եղել հիմնական ուսումնական պլանից…Այժմ մայրենիի քառամյա նոր ծրագրով առանձին դասաժամ է հատկացված արտադասարանային **ինքնուրույն ընթերցանությանը:** Շատ ուսուցիչներ այդ հնարավորությունն օգտագործում են հիմնական թեմաներն ուսուցանելու կամ ծրագրային բացթողումներն այդ ժամերի հաշվին լրացնելու նպատակով: Մինչդեռ ինքնուրույն ընթերցանության խնդիրներն այլ են.

- ընթերցողական հետաքրքրությունների ձևավորում և զարգացում,
- ընթերցասիրության սերմանում,
- գեղարվեստական գրքեր ընտրելու, կարդալու և վերլուծելու կարողությունների զարգացում,
- կրտսեր դպրոցականի բարոյակամային արժեքների և գրական ճաշակի ձևավորում,
- ձեռք բերած գիտելիքների ընդլայնում և խորացում,
- սովորողների հետաքրքրությունների ձևավորում,
- աշակերտների ճանաչողական գիտելիքների ձեռքբերում և այլն:

Գործող ծրագրերում որոշակի պահանջներ են առաջադրված աշակերտների արտադասարանային ընթերցանության կազմակերպման, ղեկավարման, ստուգման ուղղությամբ: Ըստ ծրագրի ցուցումի՝ 2-4 դասարաններում արտադասարանական ընթերցանությանը հատկացված է շաբաթը մեկական պարապմունք: Այդ պարապմունքներն անցկացվում են դասարանում՝ ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված դասաժամին: Սակայն մեծ ուշադրություն պետք է դարձնել նաև երեխաների արտադպրոցական ընթերցանությանը:

Ուսուցչին մեծ օգնություն է հատուկ ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված ձեռնարկների ստեղծումը տարրական բոլոր դասարանների համար: Այդ գրքերը նպատակ են հետապնդում կատարելագործելու կարդալու և պատմելու տեխնիկան, դրա հետ մեկտեղ ձևավորել աշակերտների գեղագիտական ճաշակը, նրանց աշխարհըմբռնումը, ներկայացնել շրջապատի կենդանական և բուսական աշխարհի ճանաչման գործընթացը գեղարվեստական և գործնական բնույթի զանազան նյութերի միջոցով:

Սկզբունքները. Գրական տեքստերի ընտրությունը կատարվել է՝ հետևյալ սկզբունքների նկատառմամբ.

1. երեխայի ընթերցողական կարողությունների հաշվառում,
2. բնագրերի հասանելիություն, որքանով է ստեղծագործությունը համապատասխանում տվյալ տարիքի աշակերտի կարողություններին,

3. հեղինակների լայն ընդգրկում / հայ և համաշխարհային մանկագիրներ/:
4. գրական տեքստերում թեմաների և ժանրերի բազմազանություն,

1.Արտադասարանային ընթերցանության արձակ և չափածո ստեղծագործությունները ոչ թե կրկնում են մայրենիի դասերին անցած նյութերը, այլ համալրում և հարստացնում նրա գիտելիքները:

Կարդալով գրքում զետեղված հետաքրքիր պատմություններն ու հեքիաթները, առակներն ու բանաստեղծությունները՝ երեխան կհանդիպի տարբեր հերոսների ՝ մարդկանց և կենդանիների, կիմանա նրանց լավ ու վատ արարքների մասին, ձեռք կբերի բազում գիտելիքներ:

Ընթերցանությունը պետք է կատարվի տանը, որպեսզի երեխանա կարողանա կատարել «Ինքնուրույն աշխատանքի» համար նախատեսված առաջադրանքները: Այդ աշխատանքների հսկողությունը և կողմնորոշումն իրականացվելու են դասարանում ՝ ուսուցչի ղեկավարությամբ և ընկերների օգնությամբ՝ «Խմբային աշխատանքի» հարցերի քննարկման եղանակով:

2. Ամեն մի բնագրից հետո տրված են առաջադրանքներ՝ դեպքերը նկարագրող, հերոսների արարքներն ու հոգեբանական վիճակները գնահատող: Նախատեսված են նաև ստեղծագործական բնույթի հանձնարարականներ: Դրանց կատարումը ենթադրում է յուրաքանչյուր տարբերակի համար գործնական պատասխաններ**: Հարցերի հերթականությունն այնպիսին է , որ երեխան կարող է քայլ առ քայլ վեր հանել ստեղծագործության ենթատեքստը, հասկանալ այն ներթաքույց գաղափարը , որը չի երևում, բայց հեղինակը հենց դա է ցանկանում ի ցույց դնել:**

Աշակերտները կարող են այդ աշխատանքները կատարել բանավոր, գրավոր, անհատապես , ենթախմբերով և ամբողջ դասարանով՝ վերջում կատարելով համապատասխան ընդհանրացումներ: Նրանք պետք է գիտելիքներ ստանան ինքնուրույնաբար, որոնողական–հետազոտական և համագործակցային աշխատանքների միջոցով և ոչ պատրաստի ձևով:

Թեմաների բազմազանությունը և ոչ մատչելիության տարբեր աստիճանները հնարավորություն են տալիս անցկացնել տարամակարդակ աշխատանքներ՝ հաշվի առնելով աշակերտի հետաքրքրությունները:

3. Ինքնուրույն ընթերցանության դասերին աշակերտները կծանոթանան հայ և արտասահմանյան մանկական գրականությանը, հայտնի հեքիաթասացների ստեղծագործություններին: Այդ կերպ նրանք հաղորդակից կդառնան գրական բարձրարժեք խոսքին և պատկերավոր մտածողությանը:

Մեծ դասականների գրական աշխարհ թափանցել հնարավոր է միայն մանկական դասական ստեղծագործություններն ինքնուրույն կարդալու,

հարցերի սեփական պատասխանները գտնելու միջոցով. այդպես նրանք կարող են բավարարել իրենց հոգևոր բազմակողմանի հետաքրքրությունները, կարող են նկատել և ընկալել գեղեցիկը՝ դատապարտելով բացասական երևույթները:

4.Երեխաների բարոյական կերպարի ձևավորման տեսակետից անփոխարինելի է գրական կերպարների դրական ներգործությունը: Այդ առումով անգնահատելի է հեքիաթների դերը: Բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ ընթերցել կամ լսել: Ուստի գրքում ամենամեծ տեղն զբաղեցնում են և՛ հեղինակային, և՛ աշխարհի ժողովուրդների հեքիաթները:

Հեքիաթների շնորհիվ երեխան ճանաչում է աշխարհը, գաղափար կազմում բարու և չարի մասին: Հեքիաթն իր հերոսներով, ժողովրդական բառ ու բանով, լեզվամտածողության հատուկ դրսևորումներով հեշտությամբ տպավորվում է երեխաների հիշողության մեջ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի պարզությունը, հաճելի ավարտը, մատչելի ենթատեքստը հեշտացնում են ընթերցումը: Հեքիաթներն ունեն հետաքրքրական դիպաշար / սյուժե /: Դրանք երեխայի ամբողջ էությունը համակող ընթերցանության նյութեր են: Հաճախակի կրկնվող բառերի ու արտահայտությունների շնորհիվ նկարագրվող դեպքերն ու հերոսները արագ և անջնջելիորեն տպավորվում են նրա հիշողության մեջ:

Մեծ մանկավարժ Վ. Սուխոմլինսկին «Սիրտս նվիրում եմ երեխաներին» գրքում ասել է. «Հեքիաթի դասավանդումն ամենաքնքուշ հպումն է երեխայի սրտին: Եվ այդ հպումից երեխան կթևավորվի, հեքիաթների կախարդական աշխարհում կթրծվեն նրա միտքն ու հոգին, կնրբանան զգացմունքները»:

Գրքում զետեղված են նաև ժողովրդական մանրապատում ստեղծագործություններ՝ տվյալ դասարանի աշակերտների մտավոր կարողություններին համապատասխան առածներ, ասացվածքներ, հանելուկներ, խաղիկներ, շուտասելուկներ և սուտասելուկներ: Դրանք ոչ միայն զարգացնում են երեխաների պատկերավոր մտածողությունը, հարստացնում նրանց գիտելիքները, այլև առիթ են ստեղծում դասարանական զվարճալի զրույցների, ուրախ և հետաքրքիր ժամանցների, բանավեճերի, խաղերի և մրցույթների համար:

Խոսելով առածների ուսուցման մասին՝ ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին գրել է. « Առածը հենց այն բանով է լավ, որ նրանում գրեթե միշտ, չնայած այն բանին, որ նա ավելի կարճ է, քան լորի պոչը, կա ինչ – որ բան, որ երեխան

պետք է հասկանա. Դա փոքրիկ մտավոր խնդիր է՝ բոլորովին համապատասխան երեխայի ուժերին»:

Առած – ասացվածքներն արտացոլում են կյանքն իր բոլոր սքանչելի կողմերով: Դրանցում խտացված է ժողովրդական իմաստնությունը: Ծավալով փոքրիկ այդ ստեղծագործությունները ներառում են այնպիսի արտահայտություններ, սովորույթների հիշատակումներ, խոհուն հայացք՝ բնության, մարդկային գործունեության ու կյանքի տարբեր երևույթների նկատմամբ, որոնց շնորհիվ նշանակելիորեն կարևորվում՝ դրանց ճանաչողական ու բարոյադաստիարակչական արժեքը:

Որպես համառոտ, դիպուկ ու պատկերավոր խոսքի գեղեցիկ նմուշներ՝ առածները մեծապես նպաստում են երեխաների ոչ միայն լեզվի մշակմանը, այլև տրամաբանական ու պատկերավոր մտածողության զարգացմանը: Բացի այդ, դրանք կարող են դառնալ հեքիաթների, առակների բովանդակության և գաղափարի մի յուրօրինակ ամփոփում, որպեսզի երեխան ինքնուրույն կարողանա կարդացածն ընդհանրացնել համապատասխան առածով կամ ասացվածքով: Օրինակ՝ ընկերասիրության, միասնության մասին տրված հետևյալ առած - ասացվածքները երեխան կարող է օգտագործել համապատասխան ստեղծագործության բովանդակության ընդհանրացման նպատակով:

Ամեն թռչուն իր երամով է ուժեղ:

Ընկեր չունեցող մարդն անթև թռչուն է:

Ինչքան էլ խելոք լինես, ընկերոջդ հետ խորհրդակցիր:

Ուրախություն լինի, թե վիշտ, լավ ընկերը կողքիդ է միշտ:

Միայնակ ծառը քամուց կվախենա:

Ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես:

Կրտսեր դպրոցականին կարող են գրավել նաև ժողովրդական և հեղինակային հանելուկները, որոնք նրանց ծանոթացնում են շրջապատի առարկաներին և երևույթներին, ուշադրություն հրավիրում դրանց բնորոշ, ցայտուն կողմերի վրա: Հանելուկները մեծ հետաքրքրություն են առաջացնում երեխաների մեջ՝ զարգացնելով նրանց դիտողականությունը, տրամաբանությունն ու պատկերավոր մտածողությունը: Մեծ է նաև արձակ հանելուկների ճանաչողական արժեքը: Դրանք կօգնեն երեխաներին հեշտությամբ գուշակել հանելուկի պատասխանը, նրա նմանողությամբ հյուսել հանելուկներ իր շրջապատի իրերի և երևույթների մասին: Օրինակ՝

Շիկակարմիր մորթով, փափլիկ պոչով մի գազանիկ է: Նա ցատկոտում է ճյուղից ճյուղ, սնվում է անտառի բարիքներով, շատ է սիրում հաճար և

ընկույզ: Ձմեռվա համար սունկ է հավաքում և չորացնում ծառերի փշերին: Բույնը սիրում է դնել ծառի փչակում:

Բերված տեղեկություններն այնքան ակնառու են, որ երեխաներն անմիջապես կհասկանան, որ խոսքն սկյուռի մասին է, իսկ նկարը կհաստատի նրանց կռահումը:

Շուտասելուկները կարող են նպաստել կրտսեր դպրոցականի լեզվաարտահայտչական հնարավորությունների զարգացմանը: Դրանք միաժամանակ, որպես հաճելի խոսքի փոքրիկ միավորներ, առիթ են դառնում երեխաների զվարճալի մրցույթների համար: Գրքում զետեղված են յոթ տարեկան երեխային մատչելի շուտասելուկներ, որոնք նա հեշտությամբ կարող է անգիր սովորել և արտասանել: Օրինակ՝

Մռռան կատուն գողեգող
Մառան մտավ՝ սիրտը դող:

Կամ՝

Ծառի վերև՝ կարմիր արև, կանաչ տերև,
Կանաչ տերև , կարմիր արև ծառի վերև:

Սուտասելուկները աշխուժություն են բերում երեխաներին, նրանց դարձնում հոգեպես առույգ և զվարթ, կենսուրախ ու լիցքառատ: Դրանք սովորաբար լինում են չափածո և կարդալու լավ նյութ են համարվում կրտսեր դպրոցականի տարիքում: Սուտասելուկները տրամաբանական աշխատանք տանելու հնարավորություն են ստեղծում, որովհետև կարդալուց բացի երեխաները պետք է ցույց տան, թե մտքի ու դատողության ինչ վրիպումներ կան դրանցում:Օրինակ՝

Ինչ ձմեռ էր, ինչ ձմեռ,
Երբ գնացի անտառ,
Խաղում էին ձյան հետ
Մեղուները կայտառ:
Ծիծառները թռվռում,
Պարում էին դրսում,
Սողունների պարսի մեջ
Փաթիլ էին որսում:

Այդ սուտասելուկի տրամաբանական ու փաստական սխալների բացահայտումը երեխաների համար առանձին դժվարություն չի ներկայացնում, և նրանք հեշտությամբ կարող են բացատրել, որ ձմռանը մեղուները ապրում են իրենց փեթակում, ծիծեռնակները չվում են տաք երկրներ, այլապես կսառչեն ձմռան

ցրտից, հետևաբար չեն կարող խաղալ ձյան հետ, պարել դրսում կամ փաթիլ որսալ, այն էլ սողունների պարսի մեջ:

Չ՞է որ պարսը մեղուների խումբն է:

Երեխաները փոքրիկ երևակայողներ են, և ամեն մի առիթ կարելի է օգտագործել՝ մղելու նրանց ստեղծագործելու, թեկուզ ստեր հորինելու:

Կրտսեր դպրոցականներին դուր են գալիս նաև **ժողովրդական խաղիկները:**

Օրինակ՝ մանկագիր Յու. Սահակյանի կողմից մշակված ժողովրդական այս խաղիկը երեխաները կարող են կարդալ, անգիր սովորել և օգտագործել իրենց խմբային խաղերի ժամանակ:

Քիթ, քիթ , կարմիր քիթ,
Կարմիր քթին կար մի ծիտ:
Աշուն եկավ տոն բերեց,
Ձմեռ եկավ ձյուն դրեց,
Ծիտը թռավ , ցուրտ արեց,
Քիթը ցրտից կարմրեց:

Այսպիսով՝ ուսուցչի խնդիրն այն է, որ ինքնուրույն ընթերցանության դասերն օգտագործի՝ ընդլայնելու սովորողների ընթերցողական կարողություններն ու հետաքրքրությունները, բարձրացնի նրանց ճաշակն ու կուլտուրան:

Այլ ժողովուրդների գրականությունը նույնպես մշտական արժանի տեղ է գրավել երեխաների գեղարվեստական ճանաչողության դաշտում: Այն հարստացնում է սովորողների զգացմունքների ու ապրումներ աշխարհը, ընթերցողին սովորեցնում հարգանքով համակվել մարդու նկատմամբ ընդհանրապես՝ անկախ նրա պատկանելիությունից:

Թումանյանի ու Անդերսենի, Աղայանի ու Գրիմ եղբայրների, Շ. Պերոյի ու Ա. Լինդգրենի հեքիաթները, Գոշի, Կորյունի ու Խնկոյանի առակները, Օսեևայի ու Սուխոմլինսկու պատմվածքները, Ս. Կապուտիկյանի, Ս. Մուրադյանի, Վ. Վարդանյանի, Հ. Արթենյանի բանաստեղծությունները և շատ ուրիշ գրողների ստեղծագործություններ **կօգնեն երեխաների մեջ դաստիարակելու մարդկայնություն, հուզվելու ունակություն, դժբախտության առումով ուրիշներին ապրումակցելու, այլոց ուրախությամբ ուրախանալու, մերձավորի ցավը նաև իրենցը համարելու կարողություն**: Կ. Ի. Չուկովսկու խոսքով՝ գրականությունը կարող է մանկական դյուրընկալ հոգում արթնացնել, դաստիարակել ուրիշի համար տանջվելու , ուրիշի հետ ուրախանալու արժեքավոր ունակությունը, առանց որի մարդը մարդ չէ:

Իսկ ինչպե՞ս են անցկացվում ինքնուրույն ընթերցանության դասերը: Դրանք կարող են իրականացվել տարբեր կերպ՝ և՛ բնագրի շուրջ աշխատանքով, և՛ կարդացածի քննարկումով, և՛ վիկտորինաների ձևով, և՛ ստեղծագործական աշխատանքներով: Միայն այս դեպքում երեխան կարող է լիովին հասկանալ գրական այս կամ այն ստեղծագործությունը:

Այժմ ուսուցման մեջ մեծ տեղ է հատկացվում **սովորել սովորեցնելու մեթոդին:** Դա ենթադրում է ինքնուրույնության զարգացում : Ուստի ուսուցիչը պետք է հնարավորություն տա, որ աշակերտներն իրենք հարցեր ուղղեն միմյանց, վերլուծեն ու պատասխանեն, ինքնուրույնաբար հանգեն եզրակացությունների, արտահայտեն իրենց անձնական կարծիքները, հիմնավորեն դրանք, մի խոսքով՝ ակտիվորեն մասնակցեն իրենց գիտելիքների ձեռքբերմանը:

Այստեղ ուսուցիչը նպատակ չունի լեզվական խնդիրներ լուծելու, ինչպես մայրենիի դասերին: Նրա աշխատանքը պիտի վերաբերի զուտ բնագրին՝ դրա բովանդակության յուրացմանը, ներքին շերտերի մեջ թափանցելու ու ենթատեքստը հասկանալու նրբություններին և հերոսների բնութագրմանը: Բոլոր առաջադրանքներն ու հարցերը պետք է միտված լինեն այդ աշխատանքների կատարմանը: Եթե առաջադրանքների մեջ կան որոշ բառակազմական վարժություններ, դրանք ևս ուղղված են տեքստի բովանդակության ընկալմանը:

Արտադասարանային ընթերցանության դասը կարող է անցկացվել հետևյալ կերպ: Երեխաները տանը կարդում են հանձնարարված նյութը և կատարում «Ինքնուրույն աշխատանքի» համար նախատեսված առաջադրանքները: Դա նրանցից կպահանջի ուշադիր, նպատակային ընթերցում: Դասարանում ուսուցիչը կարող է մի քանի աշակերտի նորից կարդալ տալ բնագիրը, ապա անցնել տեքստի գրական վերլուծությանը: Քննարկում են նախ ինքնուրույն աշխատանքը , եթե որևէ երեխա չի կարողացել կամ դժվարացել է հանձնարարությունները կատարել, ուսուցչի և ընկերների օգնությամբ բացատրվում է , առաջարկվում որոշ հատվածներ վերընթերցել դասարանում, ուղղել կամ նորից կատարել առաջադրանքը:

Դասարանական քննարկման համար նախատեսված հարցերի օգնությամբ հետևում ենք դիպաշարի զարգացմանը և ստեղծագործական հարցերի միջոցով բացահայտում բնագրի բովանդակային խորքերը: Հարցերի հերթականությունն ունի մեծ նշանակություն: Թեև ավանդաբար սկսում ենք նկարագրող հարցերից և վերջացնում ստեղծագործական ու հոգեբանական բնույթի հարցադրումներով: Այստեղ և՛ ուսուցչին, և՛ աշակերտներին կարող են ուղղուրդել բնագրի վերջում տրված խմբային ու ենթախմբային հարցերն ու առաջադրանքները: Սակայն

հարցերի մեծ մասը պայմանավորված է իրադրությամբ, այսինքն՝ դրանք բխում են հենց աշակերտների հետ աշխատանքից: Հատկապես ողջունելի է աշակերտների կողմից միմյանց տրվող հարցերի առաջադրումը ենթախմբային աշխատանքի ժամանակ: Դա ցույց է տալիս, որ նրանք փորձում են հասկանալ տեքստը: Եթե ստեղծագործությունը ծավալուն է , ապա այն կարող ենք անցնել երկու մասով՝ («Հեքիաթ սկյուռի պոչի ու փղի կնճիթի մասին », «Դինո թրթուրը») :

4.Գործնական համատեքստ

Ներկայացնենք դասերից մեկի նկարագրությունը:

Ինքնուրույն ընթերցանություն

Երկրորդ դասարան

Դասի թեման՝ Ն. Գրիգորյանի «Ընկերները» հեքիաթը

- Դասի նպատակը՝ համեմատել և հակադրել հերոսների
- արարքները ,
- զարգացնել ընթերցողական կարողություններ,
- սովորել կատարել տրված խոստումները,
- կարևորել կյանքում ընկերներ ունենալու
- հանգամանքը:

Դասի ընթացքը: Ինքնուրույն աշխատանքի ստուգում, հանձնարարված էր բնագրային աշխատանք.

1. « Ո՞վ է հեքիաթի հերոսը, ու՞ր գնաց, ի՞նչի հանդիպեց, ի՞նչ արեց, ի՞նչ ասաց»: Այս հարցերին պատասխանելու համար աշակերտը պետք է մի քանի անգամ կարդա բնագիրը կամ դրա առանձին մասերը և լրացնի հարցերի պատասխանները: Նապաստակը գնաց անտառ: Այնտեղ նա հանդիպեց սունկին: Նապաստակը խոստացավ ամեն օր այցելել սունկին: Նապաստակը ծածկեց սունկին, որ չերևա: Սունկը նապաստակին ասաց, որ նա շատ բարի է:
2. Պահանջվում է գծով միացնել, թե ինչ ասացին նապաստակն ու սունկը: Դարձյալ երեխան պետք է ուշադիր կարդա բնագիրը, որպեսզի ճիշտ կողմնորոշվի պատասխանների մեջ, քանի որ բոլոր պատասխանները վերցված են տեքստից:

3. Այս ինքնուրույն առաջադրանքով ստուգվում է երեխայի՝ մտածելու, ընդհանրացնելու կարողությունը. նա պետք է կարդա տրված նախադասությունները և նշի՝ համաձա՞յն է, թե համաձայն չէ:

Աշակերտներից մի քանիսը բարձրաձայն կարդում են ինքնուրույն աշխատանքը և քննարկում դասարանում: Հնչում են տարբեր կարծիքներ, որոնց անխտիր արձագանքում է ուսուցիչը:

Այնուհետև անցնում են խմբային աշխատանքի: Այստեղ բոլոր երեք առաջադրանքներն էլ ենթախմբային են: Դասարանը բաժանում ենք ենթախմբերի, ապա հերթով կատարում առաջադրանքները: Յուրաքանչյուր առաջադրանքի կատարումից հետո այն քննարկում ենք, քանի որ տարբեր խմբերում, անշուշտ կարծիքները տարբեր կլինեն՝ ըստ «Որո՞նք են բնագրի՝ ամենակարևոր նախադասությունը, բառակապակցությունը, բառը» հարցադրումների: Յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչը հիմավորում է իր ընտրությունը:

Խմբային երկրորդ աշխատանքը ևս կարող է աշխույժ քննարկման առիթ դառնալ. Պահանջվում է գրել երեք հատկանիշ, որ պետք է ունենա լավ ընկերը:

Երրորդ առաջադրանքը պահանջվում է խմբերով քննարկել, թե նշված չորս առած – ասացվածքներից որն է համապատասխանում հեքիաթի բովանդակությանը: Սա մեծ դժվարություն չի ներկայացնում, որովհետև տրվածներից միայն մեկն է ընկերությանը վերաբերում. «Լավ ընկերը փորձանքի մեջ է ճանաչվում»: Ուսուցիչը կարող է չսահմանափակվել միայն այս մեկ ասացվածքով, այլ հանձնարարել գրքի վերջում տրված առած – ասացվածքներ բաժնից գտնել և ասել ընկերությանը վերաբերող համապատասխան ասացվածքներ, ինչպես՝

Ընկեր չունեցող մարդն անթև թռչուն է:

Ինչքան էլ խելոք լինես, ընկերոջդ հետ խորհրդակցի՛ր:

Ուրախություն լինի, թե վիշտ՝ լավ ընկերը կողքիդ է միշտ :

Եթե երեխաներն արդեն կարդացել են Վ. Օսեևայի «Ի՞նչ մտածեց ոզնին» հեքիաթը, ապա կարելի է համեմատել երկու ստեղծագործությունների հերոսներին. Ի՞նչով են նրանք նման և ինչո՞վ են տարբերվում: Քննարկման արդյունքում պետք է հասնել այն բանին, որ երեխաները կարողանան գտնել կարևոր ընդհանրություն՝ ընկերության գաղափարը:

Հետո հակադրության մեթոդով անցնում են երկու հեքիաթների տարբերությունների հայտնաբերմանը:

Փոքրիկ տղան մենակ էր, նա ոչ մի ընկեր չուներ: Նա գնաց անտառ, որ գոնե կենդանիների մեջ ընկեր գտնի: Հնադիպեց նապաստակին, հետո սկյուռին, արջին, ոզնուն: Բայց նրանք էլ լքեցին տղային ու հեռացան: Եվ տղան մնաց

դարձյալ մենակ ու անընկեր: Ինչու՞: Ի՞նչ պետք է աներ տղան, որ չարեց: Այս և նման այլ հարցերի պատասխանների միջոցով երեխաներին հասու ենք դարձնում այն միտքը, **որ ընկեր ունենալը խիստ կարևոր է մարդու համար և պետք է հավատարիմ լինել ընկերներին, բարի լինել, փորձանքի մեջ մենակ չթողնել, ինչպես հեքիաթի տղան:** Տղայի ընկերները շատ ջերմ ու հոգատար էին նրա նկատմամբ, իսկ ի՞նքը… Իսկ ինչպիսի՞ն էին նապաստակն ու սունկը: Ինչպե՞ս նրանք լավ ընկերներ դարձան: Նրանք անձնազոհ էին, վտանգի պահին պաշտպանեցին իրար, փրկեցին միմյանց կյանքը, ամեն օր հանդիպում էին, որ մենակ չտխրեն. ահա թե ինչն է կարևոր ընկերության համար: Չէ՞ որ իմաստուն ժողովուրդն ասում է . «**Ընկերոջդ համար մի՛ խնայիր ո՛չ ուժդ, ո՛չ կյանքդ**»:

Դասի ամփոփում: Առաջադրում ենք ամփոփիչ հարցեր՝ ճանաչողական, դաստիարակչական բնույթի. Ի՞նչ սովորեցինք, ի՞նչ են սովորեցնում այդ հեքիաթները մեզ և այլն:Կատարում են համապատասխան եզրակացություններ:

Տնային առաջադրանքի հանձնարարում: Հանձնարարվում է հաջորդ դասի համար տանը ինքնուրույն կարդալ Վ. Պողոսյանի «Հեքիաթ սկյուռի պոչի ու փղի կնճիթի մասին» ստեղծագործության առաջին մասը և կատարել «Ինքնուրույն աշխատանքի» միայն առաջին առաջադրանքը:

5. **Ամփոփում**

Մայրենիի դասերի ընթացքում քննադատական մտածողության զարգացմանը նպաստող աշակերտակենտրոն մեթոդների ու հնարների կիրառման շնորհիվ կրտսեր դպրոցականներն էլ կարող են լինել իրենց ուսումնառության գործընթացի ակտիվ դերակատարները, համագործակցել դասընկերների հետ և «դառնալ ակտիվ մտածող անհատներ»:

Ընթերցանություն, ընթերցողական ճաշակ, կարդացածի վերաբերյալ եզրահանգումներ կատարելու կարողություններ, անձնային բարձրարժեք որակների զարգացում, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակում.ահա ինչպիսի որակներ է սովորողների մեջ սերմանում ինքնուրույն ընթերցանությունը:

Կարևոր է, որ երեխաների առաջին ջանքերը խրախուսվեն ուշադիր ու հոգատար ուսուցչի կողմից:Նա երեխաների համար պետք է ստեղծի տպագիր նյութերով հարուստ միջավայր: Գրքերը և այլ տպագիր նյութերը դասարանում մշտապես օգտագործվող դիդակտիկ պարագաների շարքում պետք է առաջին տեղում լինեն:

Ընթերցողական կարողությունները ձևավորվում են աստիճանաբար:Միաժամանակ դրանք բնութագրվում են իբրև աշակերտների՝ գեղարվեստական երկի բովանդակության մեջ խորամուխ լինելու ունակություններ և չեն կարող առանձնացվել խոսքային կարողություններից ու դիտվել անկախ:

Երեխան մարդուն և աշխարհը ճանաչում է նաև գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցման շնորհիվ:Այդ կերպ նա ձեռք է բերում աշխարհաճանաչողական տեղեկություններ, թափանցում մարդու հոգեկանի բարդ ու նուրբ ոլորտները , իմաստավորում դրանք և սովորում ճիշտ ապրել:**Այս դեպքում կարդալը դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց:Նպատակը դառնում է ընկալումը,իսկ կարդալը՝ պայման:** Զարգացնելով կարդալու կարողությունը՝ երեխան աստիճանաբար սովորում և վարժվում է շշուկով կարդալ և ընկալել կարդացածը:Ձևավորելով և զարգացնելով կարդալու կարողությունները՝ ինքնուրույն ընթերցանությունը կատարում է նաև այլ գործառույթներ.

1,Խոսքի զարգացում:

2.Երևակայության զարգացում:

3:Մտածողության,ուշադրության,հիշողության զարգացում:

6.Եզրակացություն

Ուսուցիչը պետք է նախապես որոշի , թե որն է լավագույն հնարավոր ավարտը,յուրացման ինչպիսի խորություն է հնարավոր,ինչ պետք է աշակերտը վերցնի կարդացածից: Ըստ այդ պահանջների բավարարման արդյունքների էլ կկատարվի ամփոփումը:

Ընթերցողը մահանալուց առաջ հազար կյանք է ապրում:
Մարդը, ով երբեք չի կարդում, ապրում է միայն մեկը:
Ջորջ Ռ. Ռ. Մարտին

Առաջարկում եմ՝

1. Ցույց տվեք ընթերցանության ձեր սեփական խանդավառությունը ՝ կիսելով ձեր սիրած գրքերը, քննարկելով ձեր կարդացածը և դասարանում գրականության հանդեպ սեր ցուցաբերելով:
2. Ձեր դասարանում ստեղծեք հարմարավետ ընթերցանության անկյուն ՝ տարիքին համապատասխան գրքերի բազմազանությամբ, հարմարավետ նստատեղերով և

լավ լուսավորությամբ, որպեսզի խրախուսեք աշակերտներին ժամանակ անցկացնել գրքերի հետ:

3. Թույլ տվեք աշակերտներին ընտրել իրենց ընթերցանության նյութերը՝ ելնելով իրենց հետաքրքրություններից՝ լինի դա գեղարվեստական, ոչ գեղարվեստական, գրաֆիկական վեպեր կամ ամսագրեր: Նրանց ինքնավարություն տալը կարող է մեծացնել նրանց ներգրավվածությունն ու մոտիվացիան:
4. Ինտեգրել տեխնոլոգիան,օգտագործեք թվային հարթակներ և էլեկտրոնային գրքեր՝ տեխնոլոգիական գիտակ աշակերտներին ներգրավելու համար: Առաջարկեք մուտք դեպի առցանց գրադարաններ և ինտերակտիվ ընթերցանության ծրագրեր, որոնք ընթերցանությունն ավելի զվարճալի և ինտերակտիվ են դարձնում:
5. Կազմակերպեք հեղինակների այցելություններ և գրքերի շուրջ զրույցներ. հրավիրեք հեղինակներին քննարկեք իրենց գրքերը և ընթերցանության փորձը:
6. Աշակերտներին խորհուրդ տվեք հանրաճանաչ գրքերի շարք, քանի որ շարքերը հաճախ ստեղծում են սպասման և ծանոթության զգացողություն, ինչը խրախուսում է երեխաներին շարունակել կարդալ:
7. Գիրք-ֆիլմ:Որոշակի ժամկետում ընթերցել որևէ գիրք,որի մոտիվներով նկարահանված է ֆիլմ, և կազմակերպել տվյալ ֆիլմի դիտում-քննարկում:
8. **Խոսեք ծնողների հետ ընթերցանության կարևորության մասին** և առաջարկեք եղանակներ, որոնցով նրանք կարող են աջակցել իրենց երեխաների տանը կարդալու սովորություններին, ինչպիսիք են ամենօրյա ընթերցանության ռեժիմը սահմանելը կամ միասին տեղական գրադարան այցելելը:
9. Նշեք ընթերցանության նվաճումները. ճանաչեք և նշեք աշակերտների ընթերցանության նվաճումները հասարակության մեջ՝ լինի դա վկայագրերի, պարգևների կամ դասարանի հայտարարությունների տախտակի ճանաչման միջոցով: Դրական ամրապնդումը կարող է ուժեղացնել նրանց ընթերցանության ջանքերը:

"Այսօր ընթերցող է, վաղը՝ առաջնորդ":

Մարգարեթ Ֆուլեր

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Կ.Դ.Ուշինսկի,Մանկավարժական ընտիր երկեր հ.2 էջ 636:

2.« Նախաշավիղ»՝2010թ.հմ8,հմ.3:

Հավելվածներ՝

https://l.messenger.com/l.php?u=https%3A%2F%2Fchat.openai.com%2Fc%2Fbaa39a7f-9fb4-440c-ba48-7083694bd3b4&h=AT1RKq1HxfEd1ygE_bZi6JPRGDHRwtEKrOxb3uzB8k6LKASy0RCwS5ryHnmz8V30u65yBgP6VLYP3Z5L9WnAR8ldFYe4-NloVUiJxJMgN9RDZcITtng5sR6UKlo5A2kln0B_yg